

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 մարտի 2008 թվականի N 1039-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարությունը **որոշում է**

1. Հաստատել Հայաստանի Հանրապետությունում հանցագործությունների կանխարգելման պետական ծրագիրը՝ համաձայն N 1 հավելվածի:
2. Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարին՝ սույն որոշման 1-ին կետով հաստատվող միջոցառումների համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների հատկացման հնարավորության հարցը քննարկել յուրաքանչյուր տարվա Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նախագիծը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության պետական միջնաժամկետ ծախսերի ծրագիրը մշակելիս՝ շահագրգիռ հանրապետական գործադիր մարմինների կողմից՝ սահմանված կարգով ներկայացված հայտերի առկայության դեպքում:
3. Հանցագործությունների կանխարգելման պետական ծրագրով նախատեսված միջոցառումների կատարման համար առաջին պատասխանատու հանրապետական գործադիր մարմիններին՝ համակատարողների հետ համատեղ նախօրոք հաշվարկել ծրագրային կոնկրետ միջոցառման իրականացման համար Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից նախատեսվող ծախսերը և դրանք ներկայացնել սեփական բյուջետային տարեկան հայտում, ինչպես նաև միջնաժամկետ ծախսային ծրագրերում:
4. Ստեղծել Հայաստանի Հանրապետությունում հանցագործությունների կանխարգելման պետական ծրագրային միջոցառումների կատարման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողով՝ համաձայն N 2 հավելվածի:
5. Հանձնարարել միջգերատեսչական հանձնաժողովում ներգրավված հանրապետական գործադիր մարմինների ղեկավարներին և առաջարկել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազին ու Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի նախագահին եռօրյա ժամկետում Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանություն ներկայացնել հանձնաժողովի կազմում իրենց կողմից առաջադրված ներկայացուցիչների տվյալները:
6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Հայաստանի Հանրապետության
վարչապետ

S. Մարգարյան

2008 թ. սեպտեմբերի 18
Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՀԱՆՅԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ

1. ԾՐԱԳՐԻ ՄՇԱԿՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ

Հայաստանի Հանրապետությունում հանցագործությունների կանխարգելման պետական ծրագիրը (այսուհետ՝ ծրագիր) մշակվել է Հայաստանի Հանրապետության վարչապետի 2007 թվականի մայիսի 3-ի «Հանցագործությունների կանխարգելման պետական ծրագիրը մշակող միջգերատեսչական հանձնաժողով ստեղծելու և հանձնաժողովի կազմը սահմանելու մասին» N 330-Ա որոշմամբ ստեղծված միջգերատեսչական հանձնաժողովի կողմից: Ծրագրի մշակման իրավական հիմքն են կազմում Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը, միջազգային իրավական պայմանագրերը, հանցագործությունների կանխարգելման ոլորտում ընդգրկված սուբյեկտների գործունեությունը կանոնակարգող Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը: Ծրագիրը մշակելիս հանգամանալից կերպով հաշվի են առնվել հատկապես Հայաստանի Հանրապետության Նախագահի 2007 թվականի փետրվարի 7-ի ՆՀ-37-Ն հրամանագրով հաստատված՝ Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարության, Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի ապրիլի 28-ի N 380-Ա որոշմամբ հավանության արժանացած՝ Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի նոյեմբերի 6-ի N 1522-Ն որոշմամբ հաստատված՝ Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման միջոցառումների ծրագրի, ինչպես նաև Անկախ պետությունների համագործակցության անդամ պետությունների ղեկավարների խորհրդի կողմից հաստատված՝ Հանցավորության դեմ պայքարի 2008-2010 թթ. համատեղ միջոցառումների միջպետական ծրագրի հիմնարար դրույթները:

2. ԾՐԱԳՐԻ ՄՇԱԿՄԱՆ ԱՆՀՐԱՃԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ

Հայաստանի Հանրապետությունում հանցագործությունների կանխարգելման պետական ծրագիրը մշակվում է առաջին անգամ: Նման ծրագրի մշակման անհրաժեշտությունը պայմանավորված է մի շարք հանգամանքներով, մասնավորապես՝

ա) հանցագործությունների կանխարգելման ոլորտում չի տարվում պետական միասնական քաղաքականություն, ցածր է հանցագործությունների սոցիալական կանխարգելման համակարգի արդյունավետությունը (հատկապես անչափահասների, քրեակատարողական հիմնարկներից վերադարձած անձանց և այլ խոցելի խմբերում):

բ) հստակ համակարգման կարիք է զգում հանցագործությունների կանխարգելման ոլորտում ընդգրկված բոլոր սուբյեկտների (պետական իշխանության բոլոր մարմինների, կազմակերպությունների, տեղական

ինքնակառավարման մարմինների, հասարակական կազմակերպությունների, ֆիզիկական անձանց) գործունեությունը.

գ) բարելավման կարիք ունի հանցագործությունների կանխարգելման ոլորտին առնչվող օրենսդրությունը.

դ) ցածր է մի շարք հանցատեսակների (ավազակային հարձակումների, կողոպուտների, բնակարանային գողությունների և այլն), հասարակական վայրերում կատարվող հանցագործությունների նախականիման, ինչպես նաև որոշակի անձանց (անչափահասների, կրկնահանցագործների) շրջանում իրականացվող կանխարգելիչ աշխատանքների արդյունավետությունը.

ե) իրավախախտումների դեմ տարվող պայքարում կտրուկ կրճատվել է բնակչության սոցիալական ակտիվությունը.

զ) ցածր մակարդակի վրա են գտնվում բնակչության շրջանում իրավական քարոզչության կազմակերպման, օրինապահ քաղաքացու վարքագծի խրախուսմանն ուղղված աշխատանքները.

է) ցածր է իրավապահ մարմինների նյութատեխնիկական ապահովվածության մակարդակը:

3. ԾՐԱԳՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

ա) հանցագործությունների կանխարգելման ոլորտում պետական միասնական քաղաքականության իրականացումը, սոցիալական կանխարգելման համակարգի արդյունավետության բարձրացումը.

բ) օրինականության և իրավակարգի հետագա ամրապնդումը, հանցավոր ոտնձգություններից քաղաքացիների սահմանադրական իրավունքների և ազատությունների պաշտպանությունը.

գ) շահագրգիռ պետական մարմինների և հանրության ներգրավվածության ապահովումը հանցավորության դեմ պայքարի ոլորտում:

4. ԾՐԱԳՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

ա) հանցագործությունների կանխարգելման, դրանք ծնող պատճառների և պայմանների վերացման գործում իրավապահ ու շահագրգիռ պետական այլ մարմինների գործունեության համակարգումը.

բ) հանցագործությունների կանխարգելման և իրավակարգի ամրապնդման գործում տեղական ինքնակառավարման մարմինների դերի բարձրացումը.

գ) հանցագործություն կատարելու համար պատասխանատվության և պատժի անխուսափելիության սկզբունքի անշեղորեն իրագործումը.

դ) հասարակական կարգի և անվտանգության ամրապնդումը.

ե) հասարակական կարգի ապահովման, հանցագործությունների նախականիման, կանխման, խափանման և բացահայտման աշխատանքներում հասարակական կազմակերպությունների ու քաղաքացիների ակտիվ ներգրավվածության ապահովումը.

զ) իրավապահ գործունեության ոլորտում վարվող պետական քաղաքականության նկատմամբ հանրապետության բնակչության մոտ վստահության ձևավորումը և իրավագիտակցության բարձրացումը.

է) հանցագործությունների կանխարգելման ոլորտում ընդգրկված պետական մարմինների կադրային և նյութատեխնիկական ապահովումը:

5. ԾՐԱԳՐԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

ա) օրենսդրության կատարելագործմանն ուղղված միջոցառումներ.

բ) կազմակերպչական գործունեության կատարելագործմանն ուղղված միջոցառումներ`

1. Մոցիալական ուղղվածություն ունեցող կազմակերպչական միջոցառումներ.

2. Հանցագործություններ ծնող պատճառների և պայմանների ազդեցության չեզոքացմանն ուղղված կազմակերպչական միջոցառումներ.

3. Իրավապահ մարմինների գործունեության բարելավմանն ուղղված կազմակերպչական միջոցառումներ.

գ) Հասարակության իրավագիտակցության բարձրացմանը և օրինականության ամրապնդմանն ուղղված միջոցառումներ:

6. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ ԵՎ ՓՈԻԼԵՐԸ

Ծրագիրը նախատեսված է 2008-2012 թթ. համար և իրագործվելու է 5 փուլով`

I փուլ` 2008 թ.

II փուլ` 2009 թ.

III փուլ` 2010 թ.

IV փուլ` 2011 թ.

V փուլ` 2012 թ.:

7. ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ

Ծրագրի ֆինանսավորումը նախատեսվում է իրականացնել`

ա) Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից.

բ) տեղական ինքնակառավարման մարմինների բյուջեներից.

գ) արտաբյուջետային միջոցներից.

դ) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ միջոցներից:

Սույն ծրագրով նախատեսված միջոցառումների կատարման համար պատասխանատու` «Կատարողը» սյունակում առաջինը նշված հանրապետական գործադիր մարմինները (անհրաժեշտության դեպքում համակատարողների հետ միասին) նախօրոք հաշվարկում են ծրագրային կոնկրետ միջոցառման իրականացման հետ կապված` Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից նախատեսվող ծախսերը և սահմանված կարգով ներառում սեփական բյուջետային տարեկան հայտում, ինչպես նաև միջնաժամկետ ծախսային ծրագրերում` ըստ միջոցառման կատարման ժամկետների:

8. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿՈՐԾՈՒՄԻՑ ՍՊԱՍՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Ծրագրի իրագործման արդյունքում նախատեսվում են`

ա) հանցագործությունների կանխարգելման ոլորտում մշակել և իրականացնել պետական միասնական քաղաքականություն, էապես բարելավել սոցիալական կանխարգելման համակարգի արդյունավետությունը.

բ) բարելավել հանցագործությունների կանխարգելման սուբյեկտների գործունեության համակարգման, վերջիններիս տեղեկատվական ապահովվածության ներկայիս մակարդակը.

գ) հանցագործությունների կանխարգելման և իրավակարգի ամրապնդման գործում զգալիորեն բարձրացնել տեղական ինքնակառավարման մարմինների դերը.

դ) էապես կատարելագործել հանցագործությունների կանխարգելման ուղղությամբ տարվող աշխատանքների իրավական դաշտը.

ե) նվազեցնել ինչպես ընդհանուր հանցավորության, այնպես էլ վերջինիս հանրային վտանգավորության մակարդակը.

զ) ներդնել հասարակական կարգի և անվտանգության ապահովման նոր, առավել արդյունավետ մեթոդներ.

է) բարելավել իրավապահ մարմինների նյութատեխնիկական ապահովվածության մակարդակը.

ը) հասարակական կարգի ապահովման, հանցագործությունների նախականիման, կանխման, խափանման և բացահայտման աշխատանքներում ապահովել քաղաքացիների ակտիվ ներգրավվածությունը.

թ) բարձրացնել բնակչության վստահության մակարդակն իրավապահ մարմինների գործունեության նկատմամբ:

9. ԾՐԱԳՐԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՆԿԱՏԱՍԲ ՀՄԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Ծրագրային միջոցառումների կատարման նկատմամբ հսկողությունն իրականացվում է երեք մակարդակներում՝

I մակարդակում՝ ծրագրային միջոցառումների իրականացման ընթացքի նկատմամբ իրականացվում է ներգերատեսչական հսկողություն, որի նպատակը վերջիններիս ժամանակին և ամբողջական կատարման կազմակերպումն է.

II մակարդակում՝ ծրագրային միջոցառումների կատարման ընթացքի նկատմամբ հսկողություն է իրականացվում Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ ստեղծված միջգերատեսչական հանձնաժողովի կողմից, որն անհրաժեշտության դեպքում համակարգում և հետևում է ծրագրի առանձին հանձնարարականների կատարման ընթացքին, դիմում է Հայաստանի Հանրապետության կառավարություն՝ ծառացած խնդիրների լուծման համար, ծրագրի յուրաքանչյուր փուլի ավարտին Հայաստանի Հանրապետության կառավարություն է ներկայացնում հաշվետվություն կատարված աշխատանքի մասին (բացառությամբ 1-ին փուլի, որի ընթացքում կատարված աշխատանքի մասին հաշվետվությունը Հայաստանի Հանրապետության կառավարություն է ներկայացնում 2-րդ փուլի առաջին եռամսյակի վերջին) և անհրաժեշտության դեպքում ներկայացնում է նոր առաջարկություններ՝ ծրագրում ընդգրկելու համար:

III մակարդակում՝ ծրագրային միջոցառումների իրականացման միջանկյալ և վերջնական արդյունքների նկատմամբ հսկողություն է իրականացնում Հայաստանի Հանրապետության կառավարություն, որն անհրաժեշտության

դեպքում աջակցում է ծրագրի իրագործման ընթացքում ծագած որոշ խնդիրների լուծման հարցում, ծրագրի յուրաքանչյուր փուլի ավարտին լսում է միջգերատեսչական հանձնաժողովի հաշվետվությունը կատարված աշխատանքի վերաբերյալ:

(9-րդ կետը խմբ. 05.02.09 N 110-Ն)

**10. ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ
ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ**

NN ը/կ	Միջոցառման բովանդակությունը	Այնկալվող արդյունքը (միջոցառման նպատակը)	Կատարողները	Ժամկետները	Ֆինանսավորման աղբյուրը
1	2	3	4	5	6
ա) օրենսդրության կատարելագործմանն ուղղված միջոցառումներ					
	«Դրամարկղային գործառնությունների մասին», «Եկամտահարկի մասին», «Շահութահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներում փոփոխություններ ու լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակում	կանխիկ դրամաշրջանառու-թյան ծավալի կրճատում, այդ թվում՝ հարկային պարտավոր-թյան սահմանման միջոցով ֆիզիկական անձանց կողմից կանխիկով փոխառնություն-ների տրամադրման սահմանափակում	ՀՀ ֆինանսների նախարարություն ՀՀ էկոնոմիկայի նախարարություն ՀՀ կենտրոնական բանկ(համաձայնությամբ) ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե	2008 թ.	Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում:
2.	(2-րդ կետն ուժը կորցրել է 18.06.09 N 673-Ն)				
3.	(3-րդ կետն ուժը կորցրել է 18.06.09 N 673-Ն)				
4.	ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության պետի հրամանների մշակում, որոնցով կսահմանվեն ծանր և առանձնապես ծանր հանցագործություններ կատարած՝ զինված անձանց հայտնաբերման և վնասագերծման հատուկ միջոցառումների տիպային պլանները	ծանր և առանձնապես ծանր հանցագործություններ կատարած՝ զինված անձանց հայտնաբերման և վնասագերծման միջոցառումների ընթացքում առկա ուժերի ու միջոցների արդյունավետ կառավարում	ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանությանն	2008 թ.	Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում:
5.	«Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ ու լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակում	կեղծ ձեռնարկատիրության քրեաիրավական սահմանման հստակեցում, քր.օր-ի 189-րդ հոդվածի 5-րդ մասի լրամշակում	ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ՀՀ դատական դեպարտամենտ (համաձայնությամբ) Երևանի պետական համալսարան (համաձայնությամբ)	2008 թ.	Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում:
6.	(6-րդ կետն ուժը կորցրել է 18.06.09 N 673-Ն)				
7.	Նախապատրաստել և հաստատման ներկայացնել միջազգային պայմանագրեր հանցագործություն կատարած անձանց հանձնման վերաբերյալ այն երկրների հետ, որոնց հետ նման պայմանագրեր կնքելու անհրաժեշտություն կա	պատժի անխուսափելիության սկզբունքի ապահովում	ՀՀ արտաքին գործերի նախարարություն ՀՀ արդարադատության նախարարություն ՀՀ գլխավոր դատախազություն (համաձայնությամբ)	2008-2012 թթ.	Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում:

			ՀՀ կառավարության առընթեր ՀՀ ոստիկանություն		
8.	Օրենսդրական փոփոխությունների փաթեթի մշակում՝ ուղղված ինկասացիոն ծառայություններ մատուցող կազմակերպությունների գործունեության նկատմամբ հսկողության մեխանիզմների կատարելագործմանը, ինկասատորների պատրաստման (վերապատրաստման) դասընթացների կազմակերպմանը	ինկասատորների և տեղափոխվող արժեքների անվտանգության ապահովում	ՀՀ կառավարության առընթեր ՀՀ ոստիկանություն ՀՀ կենտրոնական բանկ (համաձայնությամբ)	2009 թ.	Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում:
9.	ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում, որով մինչդատական վարույթ իրականացնող բոլոր մարմինների համար կներդրվեն հանցագործությունների գրանցման և հաշվառման միասնական ընթացակարգեր	հանցագործությունների ժամանակին և լիարժեք գրանցման, ինչպես նաև պետական վիճակագրության ձևավորման նպատակով դրանց հաշվառման միասնականության ապահովում	ՀՀ կառավարության առընթեր ՀՀ ոստիկանություն ՀՀ կառավարության առընթեր ազգային անվտանգության ծառայություն ՀՀ պաշտպանության նախարարություն ՀՀ կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտե ՀՀ դատական դեպարտամենտ (համաձայնությամբ) ՀՀ գլխավոր դատախազություն (համաձայնությամբ)	2010-2012 թթ.	Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում:
10.	Մարմնական վնասվածքների դեպքերով ոստիկանության մարմինների և բժշկական օգնություն ու սպասարկում իրականացնող կազմակերպությունների փոխհամագործակցությունը կանոնակարգող օրենսդրական փոփոխությունների փաթեթի մշակում	հանցագործությունների և պատահարների պատշաճ հաշվառման ապահովում, օբյեկտիվ հետաքննության իրականացում	ՀՀ կառավարության առընթեր ՀՀ ոստիկանություն ՀՀ առողջապահության նախարարություն	2009 թ.	Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում:
11.	Քրեակատարողական հիմնարկներից ազատված անձանց աշխատանքի ընդունելու հարցում տնտեսավարող սուբյեկտների շահագրգռվածությունը խթանող օրենսդրական փոփոխությունների փաթեթի մշակում	քրեակատարողական հիմնարկներից ազատված անձանց աշխատանքով ապահովում	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	2010 թ.	Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում:
12.	(12-րդ ենթակետն ուժը կորցրել է 11.02.10 N 107-Ն)				
13.	Օրենսդրական փոփոխությունների փաթեթի մշակում՝ ուղղված տրանսպորտային միջոցների պարտադիր ապահովագրության համակարգի ներդրմանը	ճանապարհատրանսպորտային պատահարների արդյունքում հասցված նյութական վնասի փոխհատուցման առաջավոր փորձի ներդրում	ՀՀ կենտրոնական բանկ (համաձայնությամբ) ՀՀ կառավարության առընթեր ՀՀ ոստիկանություն	2009 թ.	Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում:
14.	(14-րդ ենթակետն ուժը կորցրել է 08.04.10 N 373-Ն)				
15.	Արժեթղթերի շուկայում գնային չարաշահումների և ներքին տեղեկությունների օգտագործման դեմ պայքարի իրավական արդյունավետ	արժեթղթերի շուկայում չարաշահումների կանխարգելում	ՀՀ կենտրոնական բանկ (համաձայնությամբ) ՀՀ ֆինանսների	2009-2010 թթ.	Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում:

	կառուցակարգերի ներդրում		նախարարություն ՀՀ էկոնոմիկայի նախարարություն		
16. (16-րդ կենս նսժը կորցրել է 20.09.12 N 1183-Ն)					
17.	«Պետական մատնադրոշմային գրանցման մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակում	հանցագործությունների կանխարգելման և բացահայտման աշխատանքների բարելավում, քաղաքացիների նույնականացման ապահովում	ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանություն ՀՀ արդարադատության նախարարություն	2010 թ.	Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում:
18.	«Հանցագործությունների կանխարգելման մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակում	հանցագործությունների կանխարգելման պետական քաղաքականության մշակում և իրականացում	ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանություն ՀՀ կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայություն ՀՀ դատական դեպարտամենտ (համաձայնությամբ) ՀՀ գլխավոր դատախազություն (համաձայնությամբ) ՀՀ արդարադատության նախարարություն Երևանի պետական համալսարան (համաձայնությամբ)	2010 թ.	Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում:
19.	«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ ու լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակում	հանրության համար վտանգ ներկայացնող հիվանդություններով տառապող անձանց բժշկական հարկադիր հետազոտման և (կամ) բուժման ենթարկելու գործերի վարույթի սահմանում	ՀՀ առողջապահության նախարարություն ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանություն ՀՀ արդարադատության նախարարություն ՀՀ գլխավոր դատախազություն (համաձայնությամբ) Երևանի պետական համալսարան (համաձայնությամբ)	2010 թ.	Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում:
20.	Օրենսդրական փոփոխությունների փաթեթի մշակում՝ ուղղված Հայաստանի Հանրապետության Ազգային ժողով ներկայացված օրենքների նախագծերը պարտադիր քրեաբանական փորձաքննության ենթարկելու պրակտիկայի ներդրմանը	հանրապետության քրեածին իրավիճակի վրա տարբեր օրինագծերի ուղղակի կամ անուղղակի ազդեցության գնահատում	ՀՀ արդարադատության նախարարություն ՀՀ գլխավոր դատախազություն (համաձայնությամբ) ՀՀ դատական դեպարտամենտ (համաձայնությամբ) ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանություն	2012 թ.	Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում:
21. (21-րդ կենս նսժը կորցրել է 20.09.12 N 1183-Ն)					
բ) կազմակերպչական գործունեության կատարելագործմանն ուղղված միջոցառումներ					

1. Սոցիալական ուղղվածություն ունեցող կազմակերպչական միջոցառումներ

22.	<i>(22-րդ կենս ուժը կորցրել է 18.06.09 N 673- Ն)</i>				
23.	Երևան, Գյումրի, Վանաձոր քաղաքներում իրավախախտ անչափահասների վերականգնողական կենտրոնների ստեղծում	անչափահասների շրջանում իրավախախտումների կանխարգելում	<p>ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն</p> <p>ՀՀ կրթության և գիտության նախարարություն</p> <p>ՀՀ տարածքային կառավարման նախարարություն</p> <p>ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ռատիկանություն</p>	2008-2010 թթ.	<p>համապատասխան հանրապետական գործադիր մարմինների բյուջեներ</p> <p>ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ միջոցներ</p>
24.	Տեղերում սերտ համագործակցության ապահովում՝ Հայաստանի Հանրապետության մարզպետարաններում, Երևանի քաղաքապետարանում գործող երեխաների իրավունքների պաշտպանության բաժինների և շահագրգիռ մարմինների, կազմակերպությունների միջև	անչափահասների շրջանում իրավախախտումների կանխարգելում	<p>ՀՀ մարզպետարաններ</p> <p>Երևանի քաղաքապետարան</p> <p>ՀՀ տարածքային կառավարման նախարարություն</p> <p>ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ռատիկանություն</p> <p>ՀՀ կրթության և գիտության նախարարություն</p> <p>ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն</p> <p>ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն</p>	2008-2012 թթ.	Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում:
25.	Արտադպրոցական նոր հաստատություններ, սպորտային և այլ ուղղվածության խմբակներ ստեղծելու, դրանցում պետպատվերի ավելացման ուղղությամբ միջոցների ձեռնարկում	սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների զբաղվածության և դաստիարակության ապահովում	<p>ՀՀ կրթության և գիտության նախարարություն</p> <p>ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն</p>	2008-2012 թթ.	<p>համապատասխան հանրապետական գործադիր մարմինների բյուջեներ</p> <p>ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ միջոցներ</p>
26.	Հանրակրթական և նախնական (արհեստագործական) ու միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում հոգեբանի հաստիքներ ստեղծելու ուղղությամբ միջոցների ձեռնարկում	սովորողներին հոգեբանական օգնության ցուցաբերում, դաստիարակության բարելավում	<p>ՀՀ կրթության և գիտության նախարարություն</p> <p>ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն</p>	2010 թ.	համապատասխան հանրապետական գործադիր մարմինների բյուջեներ
27.	Տեղերում գործող երիտասարդական միջոցառումների կենտրոնների, ուսանողական խորհուրդների, երիտասարդական ու սպորտային տարբեր հասարակական կազմակերպությունների գործունեության խթանում	երիտասարդության ակտիվ ներգրավվածության ապահովումը երկրի հասարակական կյանքում	<p>ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն</p> <p>ՀՀ կրթության և գիտության նախարարություն</p> <p>ՀՀ մշակույթի նախարարություն</p> <p>Երևանի</p>	2008-2012 թթ.	<p>համապատասխան հանրապետական գործադիր մարմինների բյուջեներ</p> <p>համայնքային բյուջեներ և</p> <p>ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ միջոցներ</p>

			քաղաքապետարան ՀՀ մարզպետարաններ տեղական ինքնակառավարման մարմիններ (համաձայնությամբ)		
28.	Երիտասարդության ժամանցը կազմակերպելու նպատակով սպորտային հրապարակների և խաղատեղերի կառուցման, համերգների և այլ միջոցառումների կազմակերպման ուղղությամբ միջոցների ձեռնարկում	Երիտասարդության ազատ ժամանցի կազմակերպում	ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն ՀՀ մշակույթի նախարարություն Երևանի քաղաքապետարան ՀՀ մարզպետարաններ տեղական ինքնակառավարման մարմիններ (համաձայնությամբ)	2008-2012 թթ.	համապատասխան հանրապետական գործադիր մարմինների բյուջեներ համայնքային բյուջեներ և ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ միջոցներ
29.	Ժամկետային զինծառայողների մշակութային և հոգևոր պահանջմունքների բավարարման ուղղված միջոցառումների ակտիվացում	զինծառայողների հոգևոր-մշակութային պահանջմունքների բավարարում	ՀՀ պաշտպանության նախարարություն ՀՀ կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայություն ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ռատիկանություն ՀՀ մշակույթի նախարարություն	2008-2012 թթ.	Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում:
30.	Քրեակատարողական հիմնարկներում դատապարտյալների մշակութային, սպորտային և տեղեկատվության ստացման պահանջմունքները բավարարելու նպատակով խմբակների գործունեության խթանում, համերգների կազմակերպում, ինտերնետային հաղորդակցության, գրադարանային ֆոնդի զարգացում և այլն	քրեակատարողական հիմնարկներում դատապարտյալների ազատ ժամանցի կազմակերպման արդյունավետության բարձրացում	ՀՀ արդարադատության նախարարություն ՀՀ մշակույթի նախարարություն ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն	2008-2012 թթ.	համապատասխան հանրապետական գործադիր մարմինների բյուջեներ ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ միջոցներ
31.	Հայաստանի Հանրապետության մարզպետարաններում, Երևանի քաղաքապետարանում քրեակատարողական հիմնարկներից ազատ արձակված անձանց սոցիալական վերականգնման խնդիրներով զբաղվող հանձնաժողովների ստեղծում	քրեակատարողական հիմնարկներից ազատ արձակված անձանց հասարակությունում պատշաճ ադապտացման հարցում օժանդակության ցուցաբերում	ՀՀ մարզպետարաններ Երևանի քաղաքապետարան ՀՀ տարածքային կառավարման նախարարություն ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	2009 թ.	Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում:
32.	(32-րդ կետն ուժը կորցրել է 20.09.12 N 1183-Ն)				
33.	(33-րդ կետն ուժը կորցրել է 20.09.12 N 1183-Ն)				
34.	Քրեակատարողական հիմնարկներում միջնակարգ ընդհանուր կրթություն ունեցող դատապարտյալների համար	քրեակատարողական հիմնարկներում դատապարտյալների կրթական մակարդակի բարձրացում,	ՀՀ կրթության և գիտության նախարարություն	2010 թ.	Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում:

	ինտերնետի միջոցով հեռավար կարգով միջին մասնագիտական և բարձրագույն կրթություն ստանալու հնարավորության ապահովում	զբաղվածության ապահովում	ՀՀ արդարադատության նախարարություն		
35.	Թրաֆիքինգի, սեռական շահագործման զոհերի հոգեբանական, ինչպես նաև թմրամոլների բժշկական վերականգնման գործուն համակարգի մշակում և ներդրում	թրաֆիքինգի, պոռնկության, թմրամոլության երևույթների կանխարգելում	ՀՀ առողջապահության նախարարություն ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանություն	2010 թ.	համապատասխան հանրապետական գործադիր մարմինների բյուջեներ ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ միջոցներ
36.	Երևան, Գյումրի և Վանաձոր քաղաքներում անօթնանների ժամանակավոր կացարանների ստեղծում	մշտական բնակության վայր չունեցող անձանց օթնանով ապահովում	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն ՀՀ քաղաքաշինության նախարարություն	2010-2012 թթ.	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության բյուջե ՀՀ քաղաքաշինության նախարարության բյուջե ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ միջոցներ
37.	Հանրապետության մարզերում գործող հոգեբուժական հաստատություններում հանրության համար վտանգ ներկայացնող հիվանդություններով տառապող անձանց հարկադիր հետազոտության և բուժման համար նախատեսված մասնագիտացված բժշկական բաժինների ստեղծում	հանրության համար վտանգ ներկայացնող՝ հոգեկան խանգարում ունեցող անձանց, թմրամոլների, հարբեցողների և այլ հիվանդների մեկուսացում և բուժում	ՀՀ առողջապահության նախարարություն	2010-2012 թթ.	ՀՀ առողջապահության նախարարության բյուջե ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ միջոցներ
2. Հանցագործություններ ծնող պատճառների և պայմանների ազդեցության չեզոքացման ուղղված կազմակերպչական միջոցառումներ					
38.	Դատաձեռնարկային փորձաքննության ներկայացված, ինչպես նաև բժշկական բնույթի հարկադրանքի միջոցների կիրառման ենթակա անձանց պահպանության ռեժիմն ամրապնդելու ուղղությամբ միջոցների ձեռնարկում	դատաձեռնարկային փորձաքննության ներկայացված, ինչպես նաև բժշկական բնույթի հարկադրանքի միջոցների կիրառման ենթակա անձանց փախուստի ռիսկերի կանխում	ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանություն ՀՀ առողջապահության նախարարություն	2008-2009 թթ.	ՀՀ առողջապահության նախարարության բյուջե ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ միջոցներ
39.	Երևանում, Գյումրիում և Վանաձորում վճարովի ավտոկայանատեղերի թվի ավելացման ուղղությամբ միջոցների ձեռնարկում	տրանսպորտային միջոցների և դրանցից կատարվող հափշտակության ռիսկերի կանխարգելում	Երևանի քաղաքապետարան Գյումրու և Վանաձորի քաղաքապետարաններ (համաձայնությամբ)	2008-2009 թթ.	արտաբյուջետային միջոցներ ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ միջոցներ
40.	Պետության պահպանության տակ գտնվող մշակութային արժեքների հաշվառում (ռեեստրի ստեղծում)	մշակութային արժեքների հափշտակության կանխարգելում	ՀՀ մշակույթի նախարարություն	2008-2010 թթ.	Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում:
41.	Պայմանագրային հիմունքներով բանկերի, գրավատների, տարադրամի փոխանակման կետերի և ֆինանսական ծառայություններ մատուցող ավտոմատ ինքնասպասարկման սարքերի պահպանության կազմակերպում, այդ թվում՝ ազդանշանային համակարգերի և տեսախցիկների տեղադրում	բանկերի, գրավատների, տարադրամի փոխանակման կետերի և ֆինանսական ծառայություններ մատուցող ավտոմատ ինքնասպասարկման սարքերի վրա հնարավոր հարձակումների կանխում	ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանություն ՀՀ կենտրոնական բանկ (համաձայնությամբ)	2008-2012 թթ.	համապատասխան լիցենզավորված անձանց միջոցներ
42.	Ռազմավարական նշանակություն ունեցող օբյեկտների ֆիզիկական	անարբեկչության հնարավոր ռիսկերի կանխարգելում, իսկառահարկչական	ՀՀ կառավարությանն առընթեր ազգային անվտանգության	2008-2012 թթ.	համապատասխան հանրապետական գործադիր մարմինների

	պաշտպանվածության մակարդակը բարելավելու, վերջիններիս պահպանության ինժեներատեխնիկական համակարգերը վերազինելու ուղղությամբ միջոցների ձեռնարկում	միջոցառումների պլանավորում և իրականացում	ծառայություն ՀՀ պաշտպանության նախարարություն ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանություն ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն		բյուջեներ
43.	Քրեակատարողական հիմնարկներում դատապարտյալների շրջանում հետևողական աշխատանքների իրականացում՝ քրեական բարքերի տարածումը կանխելու ուղղությամբ	քրեակատարողական հիմնարկներում և դրանցից դուրս քրեական ավանդույթների ու սովորույթների տարածման կանխում	ՀՀ արդարադատության նախարարություն	2008-2012 թթ.	Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում:
44.	Ժամկետային զինծառայողների շրջանում ոչ կանոնագրքային փոխհարաբերությունների ձևավորմանը նպաստող պայմանների և պատճառների վերացմանն ուղղված միջոցառումների արդյունավետության բարձրացմանն ուղղությամբ միջոցների ձեռնարկում	զինվորական ծառայության կարգի դեմ ուղղված հանցագործությունների կանխարգելում	ՀՀ պաշտպանության նախարարություն ՀՀ կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայություն ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանություն	2008-2012 թթ.	Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում:
45.	Երևան, Գյումրի և Վանաձոր քաղաքներում բազմաբնակարան շենքերի շքամուտքերի դռների և կողային փականների տեղադրման ապահովում	բնակարանային գողությունների և հնարավոր ահաբեկչության դեպքերի նախականխում	ՀՀ տարածքային կառավարման նախարարություն ՀՀ քաղաքաշինության նախարարություն Երևանի քաղաքապետարան Գյումրու և Վանաձորի քաղաքապետարաններ (համաձայնությամբ) բազմաբնակարան շենքերի կառավարման մարմիններ (համաձայնությամբ)	2010-2012 թթ.	քաղաքային համայնքների բյուջեներ համատիրությունների միջոցներ ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ միջոցներ
46.	Քաղաքային համայնքներում մուֆ ժամերին փողոցների պատշաճ լուսավորման ապահովում	կողոպուտների, ավազակային հարձակումների և հասարակական վայրերում կատարվող այլ հանցագործությունների նախականխում	Երևանի քաղաքապետարան քաղաքապետարաններ (համաձայնությամբ)	2010-2012 թթ.	քաղաքային համայնքների բյուջեներ արտաբյուջետային միջոցներ ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ միջոցներ
47.	Քրեաբանության (կրիմինալոգիայի) կիրառական հիմնախնդիրներով զբաղվող գիտահետազոտական կենտրոն ստեղծելու ուղղությամբ անհրաժեշտ միջոցների ձեռնարկում	հանցավորություն ծնող պատճառների ու պայմանների ուսումնասիրմանը և հանցագործությունների կանխարգելմանն ուղղված կոնկրետ միջոցառումների գիտական մշակում և ներդրում, Հայաստանի Հանրապետության Ազգային ժողով ներկայացված օրինագծերի քրեաբանական փորձաքննությունների	ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանություն ՀՀ գլխավոր դատախազություն (համաձայնությամբ) ՀՀ դատական դեպարտամենտ (համաձայնությամբ)	2008-2010 թթ.	ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության բյուջե և ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ միջոցներ

		իրականացում	ՀՀ արդարադատության նախարարություն ՀՀ կրթության և գիտության նախարարություն ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա Երևանի պետական համալսարան (համաձայնությամբ)		
3. Իրավապահ մարմինների գործունեության բարելավման ուղղված կազմակերպչական միջոցառումներ					
48.	Ոստիկանության տարածքային մարմինների և տվյալ համայնքի բնակչության միջև կապի ու համագործակցության նոր մոդել մշակելու և ներդնելու նկատառումներով Արաբկիրի ոստիկանության տարածքային բաժնում փորձնական կարգով ստորաբաժանման ստեղծում	ոստիկանության և բնակչության միջև փոխվստահության ու հարգանքի մթնոլորտի ստեղծում, իրավակարգի ամրապնդման գործում արդյունավետ փոխհամագործակցության ծավալում	ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանություն	2008-2009 թթ.	Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում:
49.	Օտարերկրյա պետություններում հափշտակված և Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծված տրանսպորտային միջոցների հոսքը դադարեցնելու նկատառումներով մաքսային և ոստիկանության մարմինների փոխհամագործակցության մեխանիզմների կատարելագործում	օտարերկրյա պետություններում հափշտակված տրանսպորտային միջոցների Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծման կանխում	ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանություն ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե	2008-2009 թթ.	Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում:
50.	Մաքսային մարմիններում ներդրված TWM մաքսային ձևակերպումների ավտոմատ համակարգի կատարելագործված հնարավորությունների հիման վրա մաքսային հսկողության մեխանիզմների ընդլայնում	մաքսային վարչարարության պարզեցում, հսկողության և վերահսկողության մեխանիզմների կատարելագործում	ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե	2008-2009 թթ.	Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում:
51.	Միջգերատեսչական հանձնաժողովի ստեղծում՝ իրավապահ մարմինների և շահագրգիռ այլ գերատեսչությունների տվյալների բազաները մեկ միջավայրում ինտեգրելու, միասնական տեղեկատվական համակարգի ստեղծման աշխատանքներն իրականացնելու համար	իրավապահ մարմինների գործունեության տեղեկատվական ապահովում, աշխատանքի կատարելագործում, օրինականության ամրապնդում	ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանություն ՀՀ կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայություն ՀՀ գլխավոր դատախազություն (համաձայնությամբ) ՀՀ դատական դեպարտամենտ (համաձայնությամբ) ՀՀ արդարադատության նախարարություն ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե	հանձնաժողովի ստեղծում՝ 2008 թ., աշխատանքների ավարտ՝ 2012 թ.	Հանձնաժողովի ստեղծում՝ Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում աշխատանքների համար պատասխանատու ճանաչված հանրապետական գործադիր մարմնի բյուջե:
52.	Հանրակրթական և նախնական (արհեստագործական) ու միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում սովորողների հետ իրականացվող դաստիարակչական աշխատանքներում նոր և առավել առաջադիմական մեթոդների, ծրագրերի ներդրում՝ այդ աշխատանքներում ներգրավելով	սովորողների իրավագիտակցության բարձրացում, քաղաքացիական պոզիտիվ դիրքորոշման ձևավորում, օրինապահ քաղաքացու կերպարի ձևավորում	ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանություն ՀՀ կրթության և գիտության նախարարություն Երևանի	2008-2010 թթ.	Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում:

	տարբեր հասարակական կազմակերպությունների ներուժը		քաղաքապետարան ՀՀ մարզպետարաններ		
53.	Հանրակրթական և նախնական (արհեստագործական) ու միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում տարբեր իրավական թեմաների (այդ թվում՝ «Պետությունը, Հայ առաքելական եկեղեցին և անչափահասները» թեմայի) շուրջ գրույց-գեկուցումների անցկացում	անչափահասների շրջանում ազգի կենսունակության հարցում պետության դերի, ինչպես նաև ազգային կրոնի ու հավատքի նկատմամբ ճիշտ դիրքորոշման ձևավորում	ՀՀ կրթության և գիտության նախարարություն ՀՀ կառավարության առընթեր ՀՀ ոստիկանություն	գրույց-գեկուցումների անցկացում՝ 2008 թ-ից	Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում:
54.	Հանցավորության դեմ պայքարի հիմնախնդիրներով սեմինար-խորհրդակցությունների, գիտագործնական համաժողովների և այլ միջոցառումների պարբերաբար անցկացում, օտարերկրյա պետություններում կազմակերպվող նմանատիպ միջոցառումներին մասնակցություն	հանցավորության դեմ պայքարի հիմնախնդիրների վերաբերյալ համակարգված և զիտակնորեն հիմնավորված առաջարկությունների մշակում, միջազգային առաջավոր փորձի ուսումնասիրում և ներդրում	ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա (համաձայնությամբ) Երևանի պետական համալսարան (համաձայնությամբ) ՀՀ արդարադատության նախարարություն ՀՀ գլխավոր դատախազություն (համաձայնությամբ) ՀՀ դատական դեպարտամենտ (համաձայնությամբ) ՀՀ կառավարության առընթեր ՀՀ ոստիկանություն ՀՀ կառավարության առընթեր ազգային անվտանգության ծառայություն ՀՀ կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտե	2008-2012 թթ.	Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում:
55.	Օտարերկրյա պետություններում ՀՀ իրավապահ մարմինների ծառայողների ուսուցման, վերապատրաստման և փորձի փոխանակման գործընթացի շարունակականության ապահովում	միջազգային առաջավոր փորձի ուսումնասիրում և աշխատանքային գործունեության մեջ ներդրում	իրավապահ մարմիններ ՀՀ արտաքին գործերի նախարարություն ՀՀ դատական դեպարտամենտ (համաձայնությամբ)	2008-2012 թթ.	Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում:
56.	Ապօրինի որսի, անտառահատումների դեմ պայքարի արդյունավետության բարձրացման միջոցառումների համատեղ մշակում և իրականացում	բնապահպանության ոլորտում կատարվող հանցագործությունների կանխարգելում	ՀՀ բնապահպանության նախարարություն ՀՀ կառավարության առընթեր ՀՀ ոստիկանություն	2008-2012 թթ.	Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում:
57.	Քրեակատարողական հիմնարկների և ոստիկանության տարածքային մարմինների միջև հանցագործությունների կանխման ու բացահայտման մասին օպերատիվ տեղեկատվության փոխանակման գործընթացի ակտիվացում	կատարվող հանցագործությունների կանխում, կատարված հանցագործությունների բացահայտում	ՀՀ կառավարության առընթեր ՀՀ ոստիկանություն ՀՀ արդարադատության նախարարություն	2008-2012 թթ.	Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում:
58.	ՀՀ կառավարության առընթեր ՀՀ ոստիկանության տարբեր ծառայությունների կողմից շահագործվող տվյալների բազաների ինտեգրման և մեկ	անհրաժեշտ տեղեկատվության օպերատիվ փոխանակում ոստիկանության տարբեր ստորաբաժանումների և տարածքային մարմինների միջև	ՀՀ կառավարության առընթեր ՀՀ ոստիկանություն	2010-2012 թթ.	ՀՀ կառավարության առընթեր ՀՀ ոստիկանության բյուջե

	միասնական ցանցային միջավայրում շահագործման ապահովում				ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ միջոցներ
59. (59-րդ կենս ուժը կորցրել է 20.09.12 N 1183-Ն)					
60.	Փողերի «վճարման» գործերով ՀՀ կենտրոնական բանկի ֆինանսական դիտարկումների կենտրոնի և իրավապահ մարմինների միջև տեղեկատվության օպերատիվ փոխանակման գործող մեխանիզմի կատարելագործում	հանցավոր ճանապարհով ձեռք բերված գույքի և դրամական միջոցների օրինականացման փաստերի հայտնաբերում և արագ արձագանքում	ՀՀ կենտրոնական բանկ (համաձայնությամբ) ՀՀ կառավարության առընթեր ՀՀ ոստիկանություն ՀՀ գլխավոր դատախազություն (համաձայնությամբ) ՀՀ կառավարության առընթեր ազգային անվտանգության ծառայություն ՀՀ կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտե	2009 թ.	Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում:
61.	Հանցագործությունների մասին հաղորդումների արագ արձագանքման «1-02» տեխնիկական համակարգի ներդրում	հանցագործությունների մասին հաղորդումների պատշաճ գրանցման և անհապաղ արձագանքման ապահովում	ՀՀ կառավարության առընթեր ՀՀ ոստիկանություն	2009-2010 թթ.	ՀՀ կառավարության առընթեր ՀՀ ոստիկանության բյուջե ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ միջոցներ
62. (62-րդ ենթակենս ուժը կորցրել է 31.03.11 N 323-Ն)					
63.	Երևան քաղաքի հասարակական վայրերում, մետրոպոլիտենում տեսախցիկների տեղադրման աշխատանքների իրականացման ապահովում	փողոցային հանցավորության նախական խում, հասարակական կարգի և անվտանգության ապահովում	Երևանի քաղաքապետարան	2009-2012 թթ.	Երևանի քաղաքապետարանի բյուջե արտաբյուջետային միջոցներ ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ միջոցներ
64.	Երևանի տասր դպրոցում ոստիկանության դպրոցական տեսուչների ինստիտուտի՝ փորձնական կարգով ներդրում, դրական արդյունքի դեպքում հանրապետության մյուս դպրոցներում փորձի տարածում	անչափահասների կողմից թույլ տրվող իրավախախտումների կանխարգելման աշխատանքի նոր ձևերի ու մեթոդների ներդրում	ՀՀ կառավարության առընթեր ՀՀ ոստիկանություն ՀՀ կրթության և գիտության նախարարություն Երևանի քաղաքապետարան	փորձնական ներդրում 2009-2010 թթ., դրական արդյունքի դեպքում ներդրում 2011-2012 թթ.	Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում:
65.	Մահմանային էլեկտրոնային կառավարման տեղեկատվական համակարգի ներդրման աշխատանքների ավարտում	սահմանային անցման կետերով քաղաքացիների և բեռների տեղափոխման մասին իրավապահ մարմինների՝ անհրաժեշտ տեղեկատվությամբ ապահովում	ՀՀ կառավարության առընթեր ազգային անվտանգության ծառայություն ՀՀ կառավարության առընթեր ՀՀ ոստիկանություն ՀՀ կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտե	2010 թ.	Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում:
66.	Մաքսատան ծառայողներին թմրամիջոցներ, դրանց պրեկուրսորներ, հրազեն, պայթուցիկ և ռադիոակտիվ նյութեր հայտնաբերող	ագատ շրջանառություն արգելված առարկաների և նյութերի մաքսանենգության դեպքերի կանխարգելում	ՀՀ կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտե	2010 թ.	ՀՀ կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի բյուջե

	տեխնիկական միջոցներով զինելը				
67.	Հանցագործություն կատարած անձանց օպերատիվ-տեղեկատու քարտադարանի ավտոմատացման աշխատանքների ավարտ	օպերատիվ-տեղեկատու քարտադարանից տեղեկատվություն ստանալու ժամկետի կրճատում	ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ռստիկանություն	2011 թ.	Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում:
68.	Ինկասատրոնների պատրաստման (վերապատրաստման) ուսումնական կենտրոնի ստեղծում	ինկասատրոնների տեսագործական գիտելիքների և հմտությունների կատարելագործում	ՀՀ կենտրոնական բանկ (համաձայնությամբ) ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ռստիկանություն	2011 թ.	ՀՀ կենտրոնական բանկի բյուջե ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ միջոցներ
69.	ՀՀ մարզերում ավիոհոլային հետազոտությունների կաբինետների ստեղծում, դրանց՝ անհրաժեշտ տեխնիկական միջոցներով զինում, բացի դրանից, ՀՀ Շիրակի և Մյունիքի մարզերում նաև նարկոլոգիական հետազոտությունների կաբինետների ստեղծում՝ դրանք զինելով անհրաժեշտ տեխնիկական միջոցներով	տեղերում նարկոլոգիական և ավիոհոլային հետազոտությունների անցկացման հնարավորության ստեղծում	ՀՀ առողջապահության նախարարություն ՀՀ տարածքային կառավարման նախարարություն ՀՀ մարզպետարաններ	2010-2012 թթ.	համապատասխան հանրապետական գործադիր մարմինների բյուջեներ արտաբյուջետային միջոցներ ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ միջոցներ
70.	Ոստիկանության ստորաբաժանումների համար ժամանակակից տեխնոլոգիաներին համապատասխանող ռադիոկապի համակարգի ներդրում	անհրաժեշտ տեղեկատվության արագ և անկորուստ փոխանակում	ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ռստիկանություն	2010-2012 թթ.	ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ռստիկանության բյուջե ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ միջոցներ
71.	Ոստիկանության օպերատիվ ծառայությունների, արտաքին ծառայությունների վերակարգերի ավտոտրանսպորտային միջոցների՝ դյուրակիր համակարգիչներով համալրում	տեղում ճիշտ կողմնորոշվելու համար անհրաժեշտ տեղեկատվության արագ ստացում և հաղորդում	ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ռստիկանություն	2011-2012 թթ.	ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ռստիկանության բյուջե ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ միջոցներ
72.	Ոստիկանության Երևան քաղաքի վարչությունում՝ հասարակական կարգի և անվտանգության ոլորտում ընդգրկված ուժերի ու միջոցների օպերատիվ կառավարման կենտրոնի ստեղծում	մայրաքաղաքում հասարակական կարգի և անվտանգության ոլորտում ընդգրկված ուժերի ու միջոցների արդյունավետ կառավարում	ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ռստիկանություն	2011-2012 թթ.	ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ռստիկանության բյուջե ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ միջոցներ
73.	(73-րդ կետն ուժը կորցրել է 20.09.12 N 1183-Ն)				
գ) հասարակության իրավագիտակցության բարձրացմանը և օրինականության ամրապնդմանն ուղղված միջոցառումներ					
74.	Օտարերկրացիների մուտքի արտոնագրերի և կացության կարգավիճակների տրամադրման մասին տեղեկատվության ու ընթացակարգերի հստակ և համառոտ նկարագրությունների մատչելիության, պաշտոնական էլեկտրոնային կայքերում դրանց տեղակայման ապահովում	օտարերկրացիների իրազեկվածության ապահովում՝ նշված ոլորտում իրականացվող պետական վարչարարության վերաբերյալ, պաշտոնական դիրքի չարաշահումների կանխարգելում (կոռուպցիոն ռիսկերի նվազեցում)	ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ռստիկանություն ՀՀ արտաքին գործերի նախարարություն	2008 թ.	Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում:
75.	Օրինապահ քաղաքացու կերպարի, ինչպես նաև իրավապահ մարմինների ծառայողների աշխատանքն օբյեկտիվ ներկայացնող հաղորդաշարերի, ֆիլմերի ու գեղարվեստական ստեղծագործությունների ստեղծման և տարածման աշխատանքների խթանում	իրավապահ մարմինների գործունեության նկատմամբ վստահության ամրապնդում	ՀՀ մշակույթի նախարարություն ՀՀ հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողով (համաձայնությամբ)	2008-2012 թթ.	Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում:
76.	ՀՀ-ում հետաքրքիր կողմնորոշված կերպարների	բնակչության շրջանում արժեքային կողմնորոշման անհրաժեշտ	ՀՀ հեռուստատեսության և ռադիոյի ազգային	2008-2012 թթ.	Լրացուցիչ ֆինանսավորում չի

	կողմից դաժանության ու բռնության պաշտամունք, ինչպես նաև պոռնկություն քարոզող գեղարվեստական կինոնկարների և հաղորդումների հետարձակումն արգելելու ուղղությամբ միջոցների ձեռնարկում	համակարգի ձևավորում	հանձնաժողով (համաձայնությամբ)		պահանջվում:
77.	Զանգվածային լրատվամիջոցների օգտագործում՝ լուսաբանելու համար թրաֆիքինգի, պոռնկության, թմրամոլության և այլ վտանգավոր երևույթների բացասական հետևանքները	թրաֆիքինգի, պոռնկության, թմրամոլության և այլ վտանգավոր երևույթների վերաբերյալ հասարակության իրազեկվածության բարձրացում, բացասական հասարակական վերաբերմունքի արմատավորում	ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանություն ՀՀ արդարադատության նախարարություն ՀՀ առողջապահության նախարարություն ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	2008-2012 թթ.	Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում:
78.	Հայրենասիրության, հայրենիքի պաշտպանի վնաս գաղափարի քարոզման աշխատանքների ակտիվացում՝ հաղորդաշարերի, ֆիլմերի և գեղարվեստական ստեղծագործությունների միջոցով	Ժամկետային զինվորական ծառայությունից խուսափելու դեպքերի նախականիում	ՀՀ պաշտպանության նախարարություն ՀՀ կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայություն ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանություն ՀՀ մշակույթի նախարարություն	2008-2012 թթ.	Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում:
79.	Ժամկետային զինծառայողների հասարակական-պետական պատրաստականության շրջանակներում իրավագիտության դասաժամերի ավելացում	զինծառայողների իրավագիտակցության բարձրացում	ՀՀ պաշտպանության նախարարություն ՀՀ կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայություն ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանություն	2008-2012 թթ.	
80.	Հանրակրթական և նախնական (արհեստագործական) ու միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում սովորողների շրջանում օրինապահ և ազգասեր քաղաքացու կերպարի դաստիարակության աշխատանքներում իրավապահ մարմինների փորձառու ծառայողների ու վետերանների ներգրավում	հարգանքի ձևավորում իրավապահ մարմինների ծառայողների գործունեության նկատմամբ	ՀՀ կրթության և գիտության նախարարություն ՀՀ մարզպետարաններ Երևանի քաղաքապետարան ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանություն ՀՀ կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայություն ՀՀ դատական դեպարտամենտ (համաձայնությամբ)	2008-2012 թթ.	Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում:
81.	Գործարարությանն առնչվող վարչարարական	հանրության իրազեկվածության ապահովում գործարարության	ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն	2008-2012 թթ.	Լրացուցիչ ֆինանսավորում չի

<p>ընթացակարգերի հստակ նկարագրմամբ՝ պաշտոնական տեղեկատվության պարբերաբար տեղակայման ապահովում պաշտոնական էլեկտրոնային կայքերում</p>	<p>ոլորտում պետական վարչարարության վերաբերյալ պաշտոնական դիրքի չարաշահումների կանխարգելում (կոռուպցիոն ռիսկերի նվազեցում)</p>	<p>ՀՀ ֆինանսների նախարարություն ՀՀ կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտե</p>		<p>պահանջվում:</p>
<p>82. Մամլո ասուլիսների, ինտերնետային պաշտոնական կայքերի միջոցով իրավապահ մարմինների գործունեությունը կանոնակարգող օրենսդրության, հանցագործությունների կանխարգելման և բացահայտման հիմնահիմունքների, դրանց լուծման համար իրավապահ մարմինների կողմից ձեռնարկված միջոցների վերաբերյալ հանրության մշտական իրազեկում</p>	<p>հանրության իրազեկվածության ապահովում իրավապահ մարմինների գործունեության վերաբերյալ, վստահության ամրապնդում</p>	<p>ՀՀ կառավարության առընթեր ՀՀ ոստիկանություն ՀՀ գլխավոր դատախազություն (համաձայնությամբ) ՀՀ դատական դեպարտամենտ (համաձայնությամբ) ՀՀ արդարադատության նախարարություն ՀՀ կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտե</p>	<p>2008-2012 թթ.</p>	<p>Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում:</p>
<p>83. «Պետական ծառայողի գրադարան» մատենաշարի (իրավական ակտերի ժողովածուներ, մասնագիտական գրականություն) ստեղծում</p>	<p>պետական ծառայողների շրջանում օրինականության ամրապնդում, հասարակության իրազեկում</p>	<p>պետական ծառայություն իրականացնող մարմիններ</p>	<p>2009 թ.</p>	<p>Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում:</p>
<p>84. Իրավապահ մարմինների բոլոր տարածքային ստորաբաժանումների՝ իրավական ակտերի պարբերաբար թարմացվող էլեկտրոնային բազաներով ապահովում</p>	<p>իրավապահ մարմինների ծառայողների կողմից իրավական ակտերի հստակ իմացություն և ճիշտ կիրառում, օրինականության ամրապնդում</p>	<p>ՀՀ արդարադատության նախարարություն ՀՀ կառավարության առընթեր ՀՀ ոստիկանություն ՀՀ գլխավոր դատախազություն (համաձայնությամբ) ՀՀ դատական դեպարտամենտ (համաձայնությամբ) ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե</p>	<p>2009 թ.</p>	<p>Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում:</p>

(10-րդ կետը փոփ. 18.06.09 N 673-Ն, 11.02.10 N 107-Ն, 08.04.10 N 373-Ն, 12.08.10 N 988-Ն, 31.03.11 N 323-Ն, 20.09.12 N 1183-Ն)

(հավելվածը խմբ. 05.02.09 N 110-Ն, փոփ. 18.06.09 N 673-Ն, 11.02.10 N 107-Ն, 08.04.10 N 373-Ն, 12.08.10 N 988-Ն, 31.03.11 N 323-Ն, 20.09.12 N 1183-Ն)

**Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար**

Դ. Սարգսյան

Հավելված N 2
ՀՀ կառավարության 2008 թվականի
մարտի 27-ի N 1039-Ն որոշման

Կ Ա Ձ Մ

